ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒՄ

2016թ. ապրիլի 12 **թիվ 33 -Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության տարահանման պլանը հաստատելու մասին>> N 84-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1.3 բաժնի 5-րդ պարբերության <<Մուսալեռ>> բառը փոխարինել <<Կենտրոն>> բառով,

2) 1.3 բաժնի 6-րդ պարբերության <<տարածքային կառավարման նախարարության>> բառերը փոխարինել <<գյուղատնտեսության նախարարության>> բառերով,

3)1.3 բաժնի 8-րդ պարբերության <<<<Հայաստանի Հանրապետության <<Հայռուսգազարդ>> ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ>>>> բառերը փոխարինել <<<<Հայաստանի Հանրապետության <<ԳազպրոմԱրմենիա>> ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ>>>> բառերով,

4) 2.5 բաժնի <<Մարզի բնակչության տարահանման նյութատեխնիկական ապահովումը իրականացվում է մարզի ՔՊ առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության ուժերով և միջոցներով>> բառերը փոխարինել <<Մարզի բնակչության տարահանման ապահովումը իրականացնում են մարզի ՔՊ առևտրի և ՔՊ սննդի ու նյութատեխնիկական մատակարարման ծառայությունների ուժերով և միջոցներով>> բառերով,

5) ամբողջ հավելվածում <<մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետ>> բառերը փոխարինել <<մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն>> բառերով,

6) ամբողջ հավելվածում <<ՄՓՎ դիսպետչեր>> բառերը փոխարինել <<ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ կրտսեր հրահանգիչ>> բառերով:

Գ.ԳՅՈՌԱԼՅԱՆ